

ՍՊԻՏԱԿՈՒԹԻՒՆ ՀԵՐԱՑ

— 38 —

ի՞նչ կերպով սպիտակագոյն կ'ըլլան սև կամ այլ գոյն մազերն ։ Ճարդ անծանօթ է դիտնոց պատճառն, և զանազան ենթադրութիւնք կան զայն բացատրելու։ — Մարդուս տարիքն մեծ ազդեցութիւն ունի այդ երեսութիւն վրայ, այլ այսու հանդերձ պատանեկութեան հասակի մէջ գտնուող անձանց վրայ իսկ տեսնուած է և կը տեսնուի յաճախ սպիտակ մազ։ Ըստ մեր կարծեաց՝ հասուն հասակի մէջ հերաց սպիտակութեան սկզբնապատճառն է անոնց նուազ սնունդ առնուլն, նոյն պատճառ է նաև կնդութեան, յորում կը ներգործէ ևս ջղային գերութեան խանգարիչ ազդեցութիւն։

Սև մազերն գունաւորեալ են գորշ կանաչագոյն ճարպով մի, չէն՝ կարմըրագոյն իւղով, իսկ սպիտակն՝ անգոյն իւղով մի. — Հերաց մէջ գտնուած հանգային՝ տարերքն են. թթուուկ երկաթոյ և արշնաքարի (Manganése), լուսածնատ և բնածխատ կրոյ, և առատ բնակայժքար (silice). Սպիտակ մազն բաց ՚ի վերոյիշելոց կը պարունակէ ևս լուսածնատ մազնիտիոյ։

Լահման հերաց սպիտակութեան պատճառ կը համարի՝ օդոյ սաստիկ ազդեցութիւնն անոնց վրայ։ Եւ յիշաւի հաւանական թուի՝ թէ գոյնն յառաջ կու գայ գունաւորիչ նիւթէ (pigment) և կազէ որ մազերու խորշից մէջ կը գտնուի։ Եւ ելթէ այս կամ այն պատճառաւ, իւղային հեղուկն, որ այդ խորշից մէջ կը թափանցէ, չի կարենայ հերաց մինչև վերջին ծայրն բարձրանալ, օդ կը լեցուի անոր տեղ և մազն կըսպիտականայ. — Ուստի օգտակար է ար-

դիել այդ իւղային հեղկին շոգիացումը և զմազն միշտ թաց բռնիլ, որուն կը նպաստեն օծանելիք։

Ո՛չափ աւելի տարիք մարդոյ յառաջ կ'երթայ, և վերոյիշեալ խորչից ծայրքն կը կորսնցընեն իրենց կենդանութիւնը և կը ցամքին, նոյնչափ աւելի արագութեամբ մազերն սպիտակագոյն կ'ըլլան։ Եւ այս փոփոխութիւնն երիտասարդ հասակի մէջ ևս կրնայ պատահիլ, մանաւանդ թէ յանկարծակի որ և իցէ ժամանակ։ Քաջածանօթ է ամենուն Մարիամ-Անդուանէթի գէպքն, որոյ մազերն գիշերուան մի մէջ սպիտակացան։

Դրապինար հերաց սպիտակութեան այլ պատճառ կը գնէ, այսինքն մերթոյ մկանային նեարդից՝ որ մազի կոնդէզն կը պատեն, ջախտութիւնը։ Որով սաստիկ յանկարծական այլայլութիւն մի կրնայ պատճառել այս փոփոխութիւնը, թէպէտ և մի և նոյն ժամանակ հարկ է որ և այլ պատճառք գտնուին։ Իսկ այս ջախտութեան (nevrose) արգափիքն կրնայ մըշտառե ըլլալ, և կամ երկար կամ նուազ ժամանակ տևել։ Եւ այս կարծեաց ՚ի հաստատութիւն կրնայ ըլլալ հետևեալ գէպքն, զոր իինար կ'աւանդէ։

Երեքտասանամեայ ապուշ տղու մի վրայ երկու տարի յաջորդաբար քըննութիւն եղեր է հիւանդանոցի մը մէջ, ուր մասնալէն սակաւ ժամանակ յետոյ՝ բժիշկք տեսներ են որ տղուն մազերն շարունակ գոյն փոխելու վըրայ է, նախ բաց գեղին, ապա թուլս կարմիր, ապա սև։ Գունոյ փոփոխութիւնն կ'սկսէր. հերաց ծայրէն, և իւ-

բաքանչիւր վերոյիշեալ գոյնք գէթ շա-
րաթ մի կը տևէին. իսկ փոփոխու-
թիւնքն կ'սկսէին տղուն հիւանդու-
թիւնը բռնելու միջոցներ. Եւ եթէ
սաստիկ ծանրանար այն՝ թիսագոյն
էր մազ, իսկ եթէ ապղութեան վի-
ճակի մէջ ըլլար՝ մազն ալ բաց գոյն
կ'ունենար.

Ուստի գրեթէ ապահովապէս կըր-
նանք հաստատել՝ թէ ջզային գրու-
թիւնն մեծապէս կ'ազդէ հերաց ժա-
մանակէն յառաջ սպիտակ գոյն առնը-

լուն. Եւ ընդհանրապէս հիւանդու
կամ ջղոտ մարգկանց մազերն շուտով
կը ճերմըլինան, մանաւանդ անոնց՝ որ
կամ շատ գլուխ կը յոգնեցընեն, և
կամ սակաւ ժամնակ կը քնանան.
վասն զի անոնց մազին կողէզը չի
կրնալով ոնունդ առնուլ փութով մա-
զերն կը ճերմկցընէ. Միով բանիւ,
սպիտակ մազն բացարձակ նշան չէ
ճերութեան, այլ յաճախ բժշկաբա-
նական անժխտելի երեսիթ.

Ի ՍՐԲՈՒՀԻՆ ՍԱՆԴՈՒԿԻՑ

(Բանայանգ)

Արծամեցիր սըթապսաշոփ դու զ'ուրիշէ՝
Որոյ զոհիմ ոչխարթ, սցելափ պարարտ գէր.
Եւ մըթութեամ պատառելով զ'կուրիշը,
Փեսիմ երկմից համդիսացար հարսմ եւ ժոյք:
Աստուածայիմ խաղաղութեամ դաշանց զ'լուրիլ.
Քոյ սուրբ արեամբը կըթեցիր, ովկ Առաքուիր:
Սուսամալով զախարիս ու մասն, քոյր եւ հոյք,
Զերկմայիմը միթեցիր դու միայթ զ'լոյք:
Քոյ սուրբ արկմիմ յավանեմի հոսի ի ծուլ,
Ցոյր ի յործամս զլրիմ աստեղք ի հուրի:

(Բանայանգ)

Յեռքըս մի գրիչ, գէմն կուլումոք,
Միարըս խորիուրդը կամ զոյժում.
Հոգիս յերկիմս սկամայ քընչում
Տաստեղասումս երիստիշը.
Կամիմ զըրել զեղեցկաւէ
Տեսից բժութեամ վեր որո՞ւ.
Ես սըրտերու կ'ուզեմ որո՞ւ,
Գաղտնեաց կապերթ պիստ ժոյիւ,
Որ աթզզամ չար բանաբիշուն՝
Որ սոտոսէ իրրեւ լուս,
Դալրի լիմել եղօրմ առօիք,
Չառմէ վրսեմմ արնաչիտ.
Եւ չի քըթմէ Փեղիասայ նէտէ՝
Նմամ Ապեղիմ իշչումուն:

Հ. Պ. Աղամեսուն.